

ՎԱՌՈՒՌԼԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԹԻՒՐ

Առաջիկայ Հոկտեմբերի 30-ին կատարուելու է Ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութիւնը Մայր Աթոռում Ռուսաց կառավարութեան կողմից հրատարակուած օրէնսդրութեան (Положение) հիման վերայի ընտրութեան օրերը մօտենում էին, սակայն Պետերբուրգի կառավարութիւնը ամեննեին չէր շտապում ուղարկել ընտրողական ծանուցագրերը արտասահման, որպէսզի այնտեղի թեմերն ևս օր առաջ ձեռնարկէին պատգամաւորների ընտրութեան գործին։ Այդ անհասկանալի յապազումը մեծ ցաւ և վիշտ էր պատճառել բոլոր նայ մարդկանց և յատկապէս Ս. Էջմիածնի Միաբանութեանը, և առիթ էր տուել իկասկածելու, որ մայրաքաղաքում մի ինչ որ բան է նիւթւում մեր եկեղեցւոյ անկախութեան և իրաւանց գէմ։ Վերջերս լրագրներում երեւացող լուրերը ապացուցին, որ ազգի անհանգստութիւնը ի զուրչէր, որ Ռուսաց կառավարչական շրջաններում ճիշտ որ հարց էր բարձրացել փոփոխելու Պօլօժէնիայի յօդուածները այն մտքով, որ կաթուղիկոսի որոշ իրաւունքները սահմանափակուէին։ Բայց Տէր Փոխարքայի հզօր և բարեմիտ միջնորդութեամբ այդ հարցը առ այժմ յետագուած է, որպէսզի յետոյ, նոր կաթուղիկոսի օրով, կրկին յարուցուի և այն օրինական ճանապարհով, Յամենայն գէպս այս անգամ կաթուղիկոսական ընտրութիւնները պիտի կատարուեն առաջուայ նման, ուստի և ծանուցողական թղթերը ուղարկուած են ըստ պատկանելոյն։

Լրագրերից և Մ. Աթոռին հասած պաշտօնական տեղեկութիւններից իմանում ենք, որ շատ տեղ նոյն իսկ կատարուել, վերջացել են թեմական պատգամաւորների ընտրութիւնները, որոնք միացած հայ հոգեորականութեան ներկայացուցիչների հետ Մայր Տաճարում կատարելու են բոլոր ազգային ընտրութիւնների գլուխ՝ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութիւնը։

իւր բազմադարեան պատմութեան ընթացքում հայ ազգը քիչ անգամ չէ ծանր երկունքով բռնուել. պատմական դասն մամէնտներ նա սակաւ չէ անցրել, բայց դոքա եղել են մեծ մասամբ ըստ քաղաքականիւ Հայոց ազգը այժմ, ներքին բարոյական քայքայման կրիտիքական մոմէնտի մէջ է. նա կարօտ է այժմ բարոյական մի հզօր նեցուկի և պէտք է յուսալ, որ թէ հոգեսրական և թէ աշխարհական պատգամաւորները ամենայն լրջութեամբ և անկողմնապահութեամբ կկատարեն իրանց վրայ դրուած պարտքը և իրանց համերաշխ և խոհուն ընտրութեամբ կկարողանան տալ եկեղեցուն ու տղթին այնպիսի մի հոգեսր պետ, որ ամենայնիւ կանգնած կլինի իր կոչման ամենաբարձր աստիճանի վերայ. Պատգամաւորները Մայր Տաճարի դրան առաջ պէտք է մոռանան բոլոր իրանց անձնական շահերը և միտումները և տոգուրուած պիտի լինին մի մեծ և սուրբ հաւատով՝ ընտրել արժանաւորագունին: Ամենից աւելի զգուշանալու է ընտրելու դիւրաժեք և դիւրահոլով մի անձնաւորութիւն, որը ամէն բոպէ կարող է խաղալիք դառնալ հզօրների և ուժեղների ձեռին ի վես ժողովրդի շահերին և ի կորուստ հայ եկեղեցւոյ անկախութեան և արտօնութեանց: Ընտրելիները պէտք է բարձր լինեն ու է կուսակցական և այլ հովերից ու հոսանքներից և ընդունակ լինին կաթուղիկոսութիւն անելու ոչ թէ միայն Ռուսահայերի կամ միայն Տաճկահայերի, կամ միմիայն այս կամ այն թեմի կամ այս կամ այն կուսակցութեանը—ինչպէս այդ ի մեծ ցաւ ազգի և եկեղեցւոյ տեղի է ունեցել—այլ համայն հայ ժողովրդի համար, ուր էլ որ նա գտնուի: Ընտրելին պէտք է անկեղծ հաւատացեալ, խոհուն, բանիմաց, փորձառու, վարչական ընդունակութիւնների տէր, զարգացած և դարու ոգին ըմբռնող մի անձն լինի: Այդ բոլոր յատկութիւնները մի անձի մէջ գտնել-նշանակում է մի կատարելատիպ գտնել, որի յոյսը մենք չունենք. բայց պիտի այնպիսի մէկը ընտրել, որ մօտենար այդ կատարելատիպին-դա պատգամաւորների որբազան պարտքն է:

Ամենայն Հայոց կաթուղիկոսի դիրքը և տեղը այն առաջիննի բարձր են և լուսվի, որ միջակ ընդունակութիւնների տէր անձնաւորութիւնը հէնց իր գործունէութեան տռաջին քայլերին կընկճուի բարոյական քեռան ծանրութեան տակ և փոխանակ կարգաւորելու Հայոց ազգային եկեղեցական դործերը, հիմնովին կկազմալուծէ, առանց այն էլ խախուած կարգերը:

Հերակլէսի ոյժեր են հարկաւոր բարձրացնելու այն ծանրութիւնը, որ կոչւում է արգի ազգային եկեղեցական վիճակ, իր ցիր ու ցան հօտով, կիսակռապաշտ և կիսաանհաւատ անդամներով, կազմալուծուած վարչութիւնով, անկերպարան կրթական դործերով, անչէն վանքերով, գուեհիկ և տգէտ քահանայական դասով, հակասութիւնների մէջ ընկած և անխորհուրդ միաբանութիւնով, անապահով ձեմարանով, քար ու քանդ եղած և տնտեսապէս իսպառ քայքայուած Մայր Աթոռով:

Ապագայ կաթուղիկոսի համար մեծ և պատասխանաւու գործ կայ կատարելու, աւելի մեծ, քան շատերը թեւթեամտութեամբ կարծում են, նայելով թէ ինչ կարողութեան տէր կլինի ապագայ կաթուղիկոսը, դրա համեմատ նա կկարողանայ կամ ազատել մեր ազգային եկեղեցին ճըգնաժամից և կամ նպաստել նրա քայքայման և կազմալուծութեան, որ մենք համարում ենք նախադուռն մեր ինքնուրոյն եկեղեցւոյ ցաւալի անկման նա կարող պէտք է լինի իր հեղինակութեամբ խմբել իր շուրջը լաւագոյն ոյժեր և նշանաւոր միջոցով ազգային-եկեղեցական բիւրաւոր պէտքերին և կարիքներին բաւարարութիւն տալ, նա պէտք է հաստատուն կարգեր մտցնէ մեր հանրային կեանքի բոլոր մասերի մէջ՝ վարչականի նոյնապէս, ինչպէս և տնտեսականի, ուսումնականի նոյնապէս, ինչպէս և ազգայինի, նա պէտք է կարող լինի աւելի սերտ կապերով միացնել իր հօտի ցիր ու ցան և միմեանց օտար անդամները, անձնուէր ոէր ունենայ դէպի ազգը, պաշտպանելու նրա շահերը բոլոր տեսակ հողմերի և հատուածների դէմ, վճռականութիւն և հեղինակութիւն

ունենայ մտցնել եկեղեցական և վարչական գործերի մէջ այնպիսի բարենորոգումներ և անել այնպիսի անդամակատութիւններ, առանց որոնց չի կարող կենդանանալ անհոգութեան և չարակամ յարձակումների մատնուած մեր ազգային կեանքի հիմնաբարը, նրա ինքնուրոյն եկեղեցին։

Ժամանակները փոխւում են, մենք էլ նրանց հետ, նոր պայմանները պահանջում են, որ ապագայ կաթողիկոսը ընդունակ լինի ըմբռնելու և իրագործելու ժողովրդի համերաշխ գործակցութեամբ, ժամանակի ստիպողական պահանջը, ոտից-ցգլուխ բարեփոխելու մեր եկեղեցին և նրա հետ կապուած ազգային հաստատութիւնները։

Ես ունի ուստի նույնագույն տարրական աշխատանքներ ունենալու մասն պահանջում լինելով։

Դժու ուղարկու հայ հոնք պատուի ապագայ կաթողիկոսը ունենալու մասն պահանջում լինելով։

Ես ուղարկու հայ հոնք պատուի ապագայ կաթողիկոսը ունենալու մասն պահանջում լինելով։



Ես ուղարկու հայ հոնք պատուի ապագայ կաթողիկոսը ունենալու մասն պահանջում լինելով։

Ես ուղարկու հայ հոնք պատուի ապագայ կաթողիկոսը ունենալու մասն պահանջում լինելով։

Ես ուղարկու հայ հոնք պատուի ապագայ կաթողիկոսը ունենալու մասն պահանջում լինելով։

Ես ուղարկու հայ հոնք պատուի ապագայ կաթողիկոսը ունենալու մասն պահանջում լինելով։

Ես ուղարկու հայ հոնք պատուի ապագայ կաթողիկոսը ունենալու մասն պահանջում լինելով։